

## **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

### **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր.

կարևորելով իրավական ոլորտում միջազգային համագործակցությունը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովումը՝ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխան.

ելնելով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով փոխգործակցություն զարգացնելու Կողմերի երկուստեք ձգտումից.

համաձայնվեցին հետևյալի մասին.

#### **Հոդված 1**

##### **Համագործակցելու ընդհանուր պարտավորությունը**

Կողմերը համագործակցություն են իրականացնում սույն Համաձայնագրին համապատասխան՝ գործելով իրենց իրավասության շրջանակներում և պահպանելով իրենց պետությունների օրենսդրությունը և միջազգային պայմանագրերը:

#### **Հոդված 2**

##### **Համագործակցության հիմնական ուղղությունները**

Կողմերը համագործակցում են հետևյալ ուղղություններով.

արդարադատության ոլորտում պետական քաղաքականության ձևավորում և իրականացում.

անձի և պետության իրավունքների և օրինական շահերի ապահովում.

արդարադատության մարմինների և հիմնարկների ղեկավարում.

դատական և այլ մարմինների ակտերի կատարման ապահովում.

քրեական պատիժների կատարման կազմակերպում և ապահովում.

օրենսդրական գործունեության մեթոդական ապահովում.

իրավական տեղեկատվական համակարգերի զարգացում.

արդարադատության մարմիններում ու հիմնարկներում գրանցամատյանների վարման և ակտերի գրանցման կազմակերպում.

բնակչությանը իրավաբանական օգնության կազմակերպում.

արդարադատության մարմինների ու հիմնարկների համար կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում.

փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով գիտահետազոտական գործունեություն.

միջազգային պարտավորությունների կատարման կազմակերպում և ապահովում՝ քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին միջազգային պայմանագրերին համապատասխան:

#### **Հոդված 3**

##### **Համագործակցության ձևերը**

Սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթների կատարման նպատակով, Կողմերի համագործակցությունը իրականացվում է հետևյալ ձևերով.

աշխատանքային փորձի փոխանակում, այդ թվում՝ ճանաչողական այցեր, ստաժավորումներ, խորհրդատվություններ և սեմինարներ անցկացնելու միջոցով.

օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև գերատեսչական հրատարակումների և մեթոդական նյութերի կանոնավոր փոխանակում.

համատեղ գիտական հետազոտությունների, գիտական և գիտագործնական խորհրդատվությունների անցկացում, գիտական հրատարակումների պատրաստում.

օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման տեղեկատվական ապահովման գործում աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ իրավական կարգավորումների և միջազգային համագործակցության ոլորտում արտասահմանյան փորձի մասին նյութերի տրամադրման միջոցով, որոնք վերաբերում են ենթադրվող օրինագծի առարկային.

արդարադատության մարմինների և հիմնարկների համար կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման գործում փոխգործակցություն, այդ թվում՝ դասախոսություններ և սեմինարներ անցկացնելու, համատեղ ուսումնական հրատարակումներ պատրաստելու միջոցով.

Կողմերի գործունեության հարցերով տեղեկատվության, ինչպես նաև՝ փոխշահավետության հիման վրա, ուսումնական գրականության և գիտական հրատարակումների փոխանակում.

իրենց պետությունների գործող և գործած օրենսդրության մասին հարցումների կատարում:

#### **Հոդված 4 Համագործակցության զարգացումը**

Սույն Համաձայնագիրը Կողմերին չի խոչընդոտում սահմանելու և զարգացնելու համագործակցության փոխադարձորեն ընդունելի այլ ուղղություններ և ձևեր՝ պահպանելով սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված պայմանները:

#### **Հոդված 5 Աջակցություն ցույց տալու վերաբերյալ հարցումները**

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է շահագրգիռ Կողմի հարցումների հիման վրա կամ այն Կողմի նախաձեռնությամբ, որը գտնում է, որ առաջարկվող աջակցությունը կամ համատեղ միջոցառումը հետաքրքրություն է ներկայացնում մյուս Կողմի համար:

2. Հարցումը կամ նախաձեռնողական առաջարկությունն ուղարկվում են գրավոր, սակայն անհետաձգելի դեպքերում դրանք կարող են փոխանցվել բանավոր՝ հետագայում եռօրյա ժամկետում դրանք պարտադիր գրավոր հաստատելու պայմանով, այդ թվում՝ տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հարցման իսկության մեջ կասկած առաջանալու դեպքում կարող է պահանջվել դրա հաստատումը:

3. Աջակցություն ցույց տալու մասին հարցումը պետք է պարունակի՝ աջակցություն հայցող մարմնի և հայցվող մարմնի անվանումը, գործի էության շարադրանքը.

հարցման նպատակի և հիմնավորման նշումը.  
հայցվող աջակցության բովանդակության նկարագրությունը.  
ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել հարցման պատշաճ կատարման համար:

4. Աջակցություն ցույց տալու մասին հարցումը, որը փոխանցվել կամ հաստատվել է գրավոր, ստորագրվում է հայցող մարմնի ստորաբաժանման ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից:

### **Հոդված 6**

#### **Աջակցություն ցույց տալը մերժելը**

1. Աջակցություն ցույց տալու մասին հարցման կատարումը ամբողջությամբ կամ մասամբ մերժվում է, եթե հայցվող Կողմը գտնում է, որ դրա կատարումը կարող է վնաս հասցնել իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ այլ էական շահերին կամ հակասում է իր պետության օրենսդրությանը կամ միջազգային պայմանագրերին:

2. Հնարավորության դեպքում, հայցվող Կողմը՝ նախքան աջակցություն ցույց տալը մերժելու մասին որոշում կայացնելը, խորհրդատվություններ է անցկացնում հայցող Կողմի հետ՝ այն հարցը քննելու համար, թե կարող է արդյոք աջակցությունը ցույց տրվել այն պայմանների պահպանմամբ, որոնք հայցվող Կողմն անհրաժեշտ է համարում: Առաջադրված պայմանների հետ համաձայնվելու դեպքում, հայցող Կողմն ասպահովում է դրանց պահպանումը:

3. Հայցող Կողմը գրավոր ծանուցվում է հարցման կատարումը լրիվ կամ մասնակի մերժելու մասին՝ մերժման պատճառի նշումով:

### **Հոդված 7**

#### **Հարցման կատարումը**

1. Հայցվող Կողմը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հարցումն արագ և ըստ հնարավորին առավել լրիվ կատարելու համար:

Հայցող Կողմն անհապաղ ծանուցվում է այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում են հարցման կատարմանը կամ էսպես ձգձգում են դրա կատարումը:

2. Եթե հարցման կատարումը չի մտնում հայցվող Կողմի իրավասության մեջ, ապա այդ մասին նա անհապաղ տեղեկացնում է հայցող Կողմին և՛ վերջինիս խնդրանքով, այն փոխանցում է իր պետության իրավասու մարմնին:

3. Հայցվող Կողմն իրավունք ունի պահանջել լրացուցիչ տեղեկություններ, որոնք՝ նրա կարծիքով, անհրաժեշտ են հարցման պատշաճ կատարման համար:

4. Հարցումը կատարելիս կիրառվում է հայցվող Կողմի պետության օրենսդրությունը, սակայն հայցող Կողմի խնդրանքով կարող է կիրառվել նրա պետության օրենսդրությունը, եթե դա չի հակասում հայցվող Կողմի պետության օրենսդրության հիմնական սկզբունքներին կամ միջազգային պարտավորություններին:

5. Եթե հայցվող Կողմը գտնում է, որ հարցման անհապաղ կատարումը կարող է խոչընդոտել իր երկրում իրականացվող վարույթին, այն կարող է հետաձգել հարցման կատարումը կամ դրա կատարումը կապել խորհրդակցելուց հետո հայցող Կողմի հետ համաձայնեցված անհրաժեշտ պայմանների պահպանման հետ: Եթե հայցող Կողմը համաձայն է առաջարկված պայմաններով իրեն աջակցություն ցույց տալու հետ, ապա նա ասպահովում է այդ պայմանների պահպանումը:

6. Հայցվող Կողմը՝ հայցող Կողմի խնդրանքով, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հարցումն ստանալու, հարցման բովանդակության և դրան ուղեկցող փաստաթղթերի, ինչպես նաև աջակցություն ցույց տալու փաստի գաղտնիությունը ապահովելու համար:

Առանց գաղտնիությունը պահպանելու հարցման կատարման անհնարինության դեպքում, այդ մասին հայցվող Կողմը տեղեկացնում է հայցող Կողմին, որը որոշում է՝ նպատակահարմար է արդյոք հարցումը կատարել այդպիսի պայմաններով:

7. Հայցվող Կողմը՝ ըստ հնարավորին առավել կարճ ժամկետներում, հայցող Կողմին տեղեկացնում է հարցման կատարման արդյունքների մասին:

### **Հոդված 8**

#### **Ստացված տեղեկատվության և փաստաթղթերի օգտագործման սահմանափակումները**

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է մյուս Կողմից ստացված տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիությունը, եթե դրանք գաղտնիության ռեժիմ ունեն կամ փոխանցող Կողմը անցանկալի է համարում դրանց հրապարակումը: Նման տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիության աստիճանը որոշում է փոխանցող Կողմը:

2. Սույն Համաձայնագրի հիման վրա ստացված տեղեկատվությունը և փաստաթղթերը՝ առանց դրանք ներկայացնող Կողմի համաձայնության, չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, քան նրանք, ըստ որոնց դրանք հայցվել և ներկայացվել են, եթե միայն դրանք փոխանցած Կողմի պետությունում նրանք հանրամատչելի չեն համարվում:

3. Սույն Համաձայնագրի հիման վրա մի Կողմի ստացած փաստաթղթերը երրորդ կողմին փոխանցելու համար փոխանցող Կողմի նախնական համաձայնությունը չի պահանջվում, եթե այդ Կողմի պետությունում դրանք հանրամատչելի են համարվում և եթե դրանց փոխանցման ժամանակ նա այդպիսի պայման չի առաջադրել:

4. Սույն հոդվածի դրույթները չեն բացառում հարցման կատարման միջոցով ստացված տեղեկատվության և փաստաթղթերի օգտագործումը կամ հրապարակումը, եթե հայցող Կողմի պետության օրենքներով նման եղանակով գործելու պարտավորություն է նախատեսված: Հայցող Կողմը նախօրոք հայցվող Կողմին ծանուցում է նման տեղեկատվության և փաստաթղթերի հնարավոր և հավանական օգտագործման կամ հրապարակման մասին:

### **Հոդված 9**

#### **Ծախսերը**

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացած ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չհամաձայնեցվի:

### **Հոդված 10**

#### **Լեզուները**

Կողմերը սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցություն իրականացնելիս օգտագործում են հայերեն և ռուսերեն լեզուները:

### **Հոդված 11**

#### **Փոփոխությունները և լրացումները**

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումների, որոնք կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժան մասը համարվող համապատասխան արձանագրություններով:

## **Հոդված 12** **Համագործակցության համակարգումը**

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի համագործակցության միջոցառումների համակարգումը դրվում է Կողմերի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք կարող են միմյանց հետ հարաբերություն ունենալ անմիջականորեն.

ա) հայկական կողմից՝ միջազգային իրավական հարաբերությունների վարչության վրա.

բ) ռուսական կողմից՝ միջազգային համագործակցության դեպարտամենտի վրա:

2. Անհրաժեշտության դեպքում Կողմերը որոշում են իրենց այլ կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք՝ ի կատարումն սույն Համաձայնագրի դրույթների, կարող են անմիջական կապեր հաստատել միմյանց հետ, և նրանց միջև կապի ուղիները:

3. Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են փոփոխություններ մտցնել սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված իրենց կառուցվածքային ստորաբաժանումների ցանկերի մեջ:

## **Հոդված 13** **Աշխատանքային հանդիպումներ և խորհրդատվություններ**

Անհրաժեշտության դեպքում Կողմերի ներկայացուցիչներն անցկացնում են աշխատանքային հանդիպումներ և խորհրդատվություններ՝ սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցության արդյունավետության բարձրացման և ամրապնդման հարցերի քննարկման նպատակով:

## **Հոդված 14** **Տարաձայնությունների կարգավորումը**

Տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ, լուծվում են խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

## **Հոդված 15** **Այլ միջազգային պայմանագրերի հետ առնչությունը**

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են Կողմերի պետությունների այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը:

## **Հոդված 16** **Եզրափակիչ դրույթներ**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ իր մտադրության մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Կողմին: Սույն Համաձայնագիրը գործողությունը դադարեցնում է այդպիսի ծանուցում ստանալու օրվանից երեք ամիս անց:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2004 թվականի դեկտեմբերի 28-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստն էլ հավասարազոր են:

**Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 28.12.2004թ.**